

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքը արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՀԱՐ ԹԱՏՐԵՐԳԱԿԱՆ ԹԻՒ 4

# ԹԱՏՐԵՐԳԱՓՈՐՉ ՄԸ

ԿԱՏԱԿԱՆԱԴ ՄԵԿ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ

ԱՆՁԻԿՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵՑ

Հ. ԳԵՈՐԳ Վ. ՓԱՆՁԻԿԵԱՆ

ՄԽԻԹ. ՈՒԽՏԵ



ՎԻԵՆՆԱ

ՄԻԼԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ

1932

891-995

Կ-21

-6 NOV 2011

891.99 5

47-21

413

ՀԱՐ ԹՎԵՐԵՐԳԱԿԱՆ ԹԻՒ 4

# ԹԱՏԵՐԱՓՈՐՉ ՄԸ

ԿԱՏԱԿԱՆԱՂ ՄԵԿ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ,

ԱՇԽԱԿԱՆ ՀԱՄԱՐ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵՑ

Հ. ԳԵՂՋ Վ. ՓԱՆՉԻԿԵԱՆ

ՄԽԻԹՐ. ՈՒԽՏԵ



ՎԻԵՆՆԱ

ՄԵԼԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ

1932

27 JUNE 2013

13478

## ԱՆՁԻՆՔ

ՕՐ. ԱՆՁԵԼ, ՏԵՍՀՈՒՀԻ ՕՐԻՄՈՒԴԱԳ ՎԱՐԺԱ-  
ՐԱՆԻ :

ԱՆՆԻԿ

ՊԵՂԹՐԻՍ

ԿԱՏԱՐԻՆԵ

ՏԻՐՈՒՀԻ

ԵՒԳԻՆԵ

ԳԻՀԵՐՈԹԻԼ աշակերտուհիներ :

## ՏԵՍԱՐԱՆ

Բաւական ընդարձակ սենեակ մը, պատե-  
րու վրայ քանի մը աշխարհացոյց քարտէս-  
ներով եւ այլեւայլ գիտական պատկերներով :  
Բեմին մէջտեղը սեղան մը, որուն վրայ  
դրուած է մութ գունով ծածկոց մը. պահա-  
րան մը, որուն մէջ կը գտնուին փեղոյր մը,  
անգղիական գնդասեղներ, երկայն վերարկու-  
մը եւ լայն ժամանէններով գլխարկ մը:

Կատակախաղիս մէջ գտնուած չորս  
նուազներուն նօրաները՝ դաշնակի ընկերակ-  
ցուքեամբ, կարելի է ստանալ առանձին.  
դիմել Միիր. գրավանառուքեան :



2974-61

## ԹԱՏԵՐԱՓՈՐՁ ՄԸ

### Ա. ՆՈՒԱԳ

#### ԱՆՆԱ

Ի՞նչպէս ուրախ ենք աղջիկներ,  
Օրիորդն զուրս է զացեր :  
Թրալալա, ազատ ենք ահա,  
Անդործ ենք, հա', հա', հա' :  
Կատակ, խընդուք եւ ըզրուանք,  
Լզրուանք,  
Ու ցընծանք,  
Մեր այս փոքրիկ գլուխներու տակ,  
Զկայ ուրիշ նրպատակ :  
Հա', երդ ու ծիծաղ,  
Հա', դարձպար ու խաղ,  
Թատը ու զբուանք,  
Անվերջ խայտանք,  
Թրալալա, թրալալա :

12

4

Այո՛, այո՛, այսօր պէտք է որ մեր ժամանակն ուրախ զուարթ անցընենք: Կատուն տուն չէ, հետեւաբար մենք մուկերս, աղատօրէն մեր ուղածը կրնանք ընել: (Դուռը կը քանայ եւ դուրս կը գոչէ) ինծի նայեցէք, աղջիկներ, տակաւին պատրաստ չէ՞ք:

ՊէԱ. ԿԱՏ. ՏԻՐ. ԵՒԳ. (Բեմին ետևէն) Տակաւին չէ: Եւ ոչ իսկ հազուած ենք: Ի՞նչ, զմեղ աճպարա՞ր կը կարծես, որ մէկ բոպէին մէջ հմայենք:

ԱՆ. — Ո՛հ, անտանելի էք: (Առջեւ գալով) Դարձեալ այս աղջիկներուն հետ գործ պիտի ունենամ:

ՊէԱ. — (Ներս մտնելով ծիծաղերես) Աննիկ, Աննիկ, հա՛, հա՛, հա՛: (Զախ կողմը ցոյց տալով) Հո՛ն նայէ՛, ի՞նչ գողտարիկ, գոյնզգոյն զգեստներ կը հաղնին: Հա՛, հա՛, հա՛, շատ ծիծաղաշարժ է:

ԱՆ. — Այո՛, ծիծաղաշարժ է. սակայն սա՛ ալ զիտցի՛ր որ ժամանակն ալ թանկագին է: — Մատածէ՛ մէյ մը, որ Օրիորդը ամէն ըստէ կրնայ իր ճամբորդութենէն վերադառնալ:

ՊէԱ. — Ո՛հ, սարսուռ կը զգամ: Ճիշդն ըսելով մեր գաղափարը քչիկ մը յանդուզն է:

ԱՆ. — Ինչպէ՞ս: Ինչո՞ւ համար մեղի պէս դեռատի աղջիկներ պիտի չկարենան եղեր եւ ոչ իսկ կատակախաղ մը ներկայացընել:

ՊէԱ. — Է՛յ, այո՛. բայց այսպէս... այս սկարագաներու տակ. Օրիորդին կամքին հակառակ...

ԱՆ. — Բայց ինչո՞ւ հրաման չտուառ մեղի: Շատ աղէկ կ'ընենք, եթէ մենք ալ շաղանաբար թատր խաղանք:

ՊէԱ. — Ճիշդէ: Օրիորդը զմեղ սաստիկ վշտացուցած է. ամէն անդամ սապէս կ'ըսէք. (Ճայնն ու կերպը ձեւացնելով) Մաքէ հանեցէք թատր խաղալը: Ասոր համար տաղանդ կը սահմանջուի, տաղանդ, եւ զարձեալ տաղանդ: (Բնական ձայնով) Իբրեւ թէ մենք իրեն երեք անդամ՝ կրկնած տաղանդէն աւելին չունենայինք:

ԱՆ. — (Ծիծաղելով) Կարձատես ըլլալով՝ եւ ոչ իսկ մեր տաղանդները կարող էր տեսնել: Սակայն հետաքրքիր եմ զիտնալ թէ տոանց ակնոցի ճամբորդութեանը ատեն ի՞նչպէս մէջէն ելաւ: Գիտե՞ս որ Օրիորդը իս ակնոցը հոս մոռցած է:

ՊէԱ. — Այո՛, այո՛, իմացայ: Տիրուհին

դտեր է : ԱԵՇԴ Օրիորդը ո՛վ գիտէ ճամբան  
ո՛րչափ գեղեցիկ տեսարաններ վայելելու  
հաճոյքէն պիտի զրկուի ասով :

ԱՆ · — Այո՛ , իր փոքր ճամբորդութեանը  
ա՛յնքան յանկարծ , ա՛յնքան յանկատրաս-  
տից ձեռնարկեց :

ՊԵԱ · — Հեռագիր մը ընդունած էր :

ԱՆ · — Անո՞ր համար էր ուրեմն որ այն-  
պէս խորհրդաւոր կերպով ճամբայ ելաւ :

ՊԵԱ · — Այո՛ , աճապարանքով ամէնէն  
կարեւոր իրերը միայն ծրարեց կապոցի մը  
մէջ , զմեղ ծեր , կէս խուլ Մարիամին յանձ-  
նեց եւ հապճեսով այն իր ամէնէն աւելի սի-  
րած ճառերէն մէկը խօսեցաւ մեղի եւ կառ-  
քով իսկոյն կայարան փութաց :

ԱՆ · — ՄԵՆՔ ալ իսկո՞յն հանճարեղ գա-  
ղափարն ունեցանք բացակայութենէն աղէկ  
մը օգտուելու : (Գախ կողմը մտիկ լնիլով)  
Ինձի նայէ , մեր արուեստագէտները կու գան  
արդէն : (Դուռը կը բանայ) Ներս հրաժմե-  
ցէք , ներս հրաժմեցէք , օրիորդներ : Փորձը  
անմիջապէս սկսելու է :

ԿԱՏ · — (Գաւառացի մանչու զգեստ հա-  
գած) ՏԻՐ · Եւ ԵՒԳ · (գաւառացի աղջկան

զգեստով ձախ կողմէն ներս կը մտնեն) Բա-  
րե՛ւ ձեզ :

ՊԵԱ · — Հա՛ , Հա՛ , Հա՛ : Ճիշդ գաւա-  
ռացի եղեր էք :

ԱՆ · — Հիանալի է , աղջիկներ , սքանչե-  
լի ... : Արդ՝ ես , իրեւել զերասաններուդ վա-  
րիչը , կը յայտնեմ ձեզի իմ գոհունակու-  
թիւնս :

ԿԱՏ · — (Կը գրիէ եւ կը համբուրէ զԱն-  
նա) Պաչէկ մը առւր ինձի , օրիորդ :

ԱՄԷՆՔԲ · — Հա՛ , Հա՛ , Հա՛ :

ԱՆ · — (Մերժելով) Հանդարտ կցցիր ,  
չարաճճի :

ՊԵԱ · — (Ծիծաղելով) Այո՛ , Կատարինէ  
հիմայ գաւառացի մանչ մըն է դարձած :

ՏԻՐ · — Մէկդի՞ հիմայ խեղկատակու-  
թիւն : Աղջիկներ , նայեցէք զգեստս աղէ՞կ է :

ԵՒԳ · — Հապա իմի՞նս : (Իր վրայ կը  
դատնայ)

ԱՆ · — Հիանալի կերպով յարմարցուցէր  
էք : Կցցէ՞ք : Եւ ոչ կ'իմացուի անգամ թէ  
տարագնիդ հին կտորներէ յարմարցուած է :  
Բայց հիմայ փորձի սկսինք : Ամէն բանէ  
առաջ պէտք է երդ մը երգենք : Կը խնդրեմ ,  
յարդելի գաւառացի երդչախումք :

ԿԱԾ. ՏԻՐ. ԵՒԳ. (կը շարուին : Կատարինէ մէջտեղ ոտքի վրայ կը կենայ կամ սեղանի մը ետեւը կը նստի եւ իր մանտօլինով երգին կ'ընկերանայ)

ԱՆ. ՊԵՍ. (Բեմին մէկ կողմը կը կենան, երգը մտի կ'ընին կամ նյնպէս մանտօլինով կամ զուքակով եւ կամ կիբառով կ'ընկերանան)

ԿԱԾ. ՏԻՐ. ԵՒԳ. (կ'երգեն)

## F. ՆՈՒԱԳ

1.

ԵՇՀՇ, անցորդ, այս կողմ եկուր.

Այս տաքին ո՞ւր կ'երթաս,

Խոնջ ու ծարաւ ու անօթի,

Այդակս չուտ ո՞ւր կ'երթաս :

Ո՞ւր կ'երթաս, ո՞ւր կ'երթաս, ո՞ւր կ'երթաս,  
ո՞ւր կ'երթաս,

ԱՌ հանդիր, աՌ հանդիր, ո՞չ, աՌ հանդիր :

2.

Եկո՞ւր մեղի, անդին անցորդ,

Մեր հիւրն ես թանկագին

Եկո՞ւր դէղի ստուերին տակ,

Տեղ ունիս մեր կողքին :

ՄԵՐ հիւրն ես թանկագին, թանկագին, թանկագին :

ՄԵՐ կողքին, մեր կողքին, ո՞չ, թանկագին :

3.

ՄԵՆՔ աԼ նոր ենք նստեր հացի,  
Գերանդին բըթացեր .

ԵԿՈ՞ւր անցորդ, քու կուրծքըդ աԼ,  
Թո՞ղ չցեն մեղկ հովեր :  
ԱՌ հանդիՌ, եւն :

ԱՆ. Եւ ՊԵՍ. — ԿԵցցէՌ, շատ լաւ երգեցիք, ծափահարութեան արժանի էք : (Բեմին ետեւէն կը լսուին խարազանի շառաչիւններ, զորոնք կարելի է ձեւացնել պարզապէս ձեռքերն իրարու զարնելով)

ԿԱԾ. — (Ականջ տնկելով) Լուռ կԵցէՌ,  
աղջիկներ : (Դէպ ի պատուհանը կը վազէ)  
Կառք մը կու դայ դէպ ի մեզ :

ՏԻՐ. — (Նմանապէս պատուհան վագելով) Ո՞Վ Աստուած իմ : ՄԵՐ Օրիորդն է,  
կառքէն վար կ'իջնէ :

ԵՒԳ. — (Մեծ անձկութեամբ) Ո՞Վ տէր  
իմ : Իսկ մենք այս տարագներով :

ԱՆ. — ՀանդարտեցէՌ աղջիկներ . միՌ

խոռվիք ամենեւին : Եկէ՛ք, չուսոոլ հնարք  
մը գտնենք :

ՊէԱ. — (Անձկութեամբ) Իւրաքանչիւր  
վլյորկեան կրնայ ներս մտնել :

ԱՆ. — Ո՛չ, ո՛չ, անմիջապէս չի կրնար  
ներս մտնել . որովհետեւ ծեր, խուլ Մա-  
րիամը դուրս զրկած ենք : Ո՞վ կը հաճի եր-  
թալ դուռը բանալ :

ՊէԱ. ԿԱԾ. ՏԻՐ. ԵՒԳ. (Խառնիլսուն)  
Ես չէ . Ես չէ . Ես չէ : Ես ալ չէ :

ԱՆ. — Սպասեցէք . հանձարեղ դաղափար  
մը ունեցայ :

ԱՄԷՆՔԲ. — Ի՞նչ, Անիկ, չուս ըսէ,  
արագ ընենք :

ԱՆ. — (Անապարանին) Ինձի նայեցէ՛ք,  
չիմայ ճիշդ յարմար ժամանակն է : Պէտք է  
Օրիորդին ցոյց տանք, որ մենք ալ կատա-  
կախաղի կամ թատերախաղի տաղանդ ու-  
նինք : Դո՛ւն, Պէտքիս, դուն հիանալի կեր-  
պով կրնաս ձեւացնել մեր ծեր Մարիամը :  
Շուտ սա շալը վրադ անցուր : (Պէտքիսին  
ուսերուն վրայ մուր գումով սեղանի ծածկոց  
մը կը դնէ, եւ զայն գնդասեղով մը կուրծքին  
վրայ կը հաստատէ) Հա՛, չիմայ եղաւ : Շուտ  
վլուխդ անցուր Մարիամին խոշոր վեղոյրը :

(Պահարանէ մը վեղոյր մը կը հանէ) Կը տես-  
նե՞ս, ճիմայ դուն ճիշդ խուլ Մարիամ եղար :

ՊէԱ. — (Անձկութեամբ) Բայց Օրիորդը  
վիս անպատճառ պիտի ճանչնայ :

ԱՆ. — Անհոգ եղիր . Օրիորդը ակնոց  
չունի :

ՏԻՐ. — Ո՛չ, ակնոց չունի . ի՛մ քովս է  
ակնոցը : (Կը ցուցնէ)

ԿԱԾ. — Ա՛խ, ի՞նչ պիտի ըլլանք :

ՏԻՐ. Եւ ԵՒԳ. — (Միասին) Մենք ի՞նչ  
պիտի ներկայացնենք ուրեմն :

ԱՆ. — Քիչ մը վերջը կ'իմանաք : Ես  
Օրիորդին կը մեկնեմ : (Զգեսի պահարանը  
կ'երբայ, կանացի երկայն վերարկու մը  
վրան կ'առնէ, զլուխը՝ լայն ժապաւէններով  
մեծ զլխարկ մը կը դնէ) ԱՀա՛ եղաւ : (Դուրսը  
դուռը կը զարնուի) Օհօ՛ . զանդակի առաջին  
ազգանշան : Ներկայացումը պիտի սկսի ան-  
միջապէս : (Դուռը աւելի զօրաւոր կը զար-  
նուի) Երկրորդ ազգանշան : Պէտքի՛ս, ոհ  
ո՛չ, սիսալեցայ, Մա՛րիամ, չուտով դուռը  
բա՛ց :

ՊէԱ. — (Դուռը բանալու գացած ժամա-  
նակ) Ա՛խ, սիրաս . տեսնէք, ի՞նչպէս կը  
դարնէ : (Կը մեկնի)

ԱՆ. — Աղջիկներ, քիչ մը ես քաշուեցէք. եւ ամէն ըրածիս հաւանութիւն յայտնեցէք:

ԿԱԾ. — Ո՞չ, երանի՛ թէ յաջողէինք:

ՏԻՐ. — Օրիորդին այսափի կարձատեսը ըլլալը բարերախտութիւն մըն է:

ԵՒԳ. — Ո՞չ, շատ հետաքրքիր եմ իմանալու թէ՝ ի՞նչ ինքը պիտի ունենայ:

ՊԵԱ. — (Հարցնելով) Ո՞վ է դուքսը:

ՕՐ. — (Դուրսէն) Դո՞ւն ես, Մարիամ. ի՞նչ է պատահեր ձայնիդ: Կ'երեւաց թէ մսեր ես: Բա՛ց, բա՛ց, ես եմ, Մարիամ:

ՊԵԱ. — (Դուռը բանալով) Բարով եկաք, Օրիորդ, բարով եկաք:

ԱՆ. — (Ցած ձայնով) Լուցէք, Օրիորդը կու գայ:

ՊԵԱ. — (Ճիգեր կ'ընէ ծեր, խուլ Մարիամը ձեւացնելու. երկուքը միասին ներս կը մտնին) Այո՛, այո՛: Շատ ցուրտ է այսօր: (Հազարով) Հըմ, հըմ: Միշտ ալ ականջիս կը գարնէ: Գիտցէ՛ք, Օրիորդ, շատ անդամ ամէն բան ճիշտ չեմ լսեր, բայց առաջ, ա՛խ, առաջ — այո՛ — այն ատեն շատ աղէկ կը լուէի: (Կը հազայ)

ԿԱԾ. — (Ցած ձայնով Աննային) Ճեցտ մեր ծեր Մարիամին պէս կը խօսի:

ՏԻՐ. եւ ԵՒԳ. — (Պէարբիսի վրայ նայելով կը գուարենանան)

ՕՐ. — Շատ լաւ: Եկո՛ւր նայիմ, ա՛ռ ասոնք: (Պէարբիսին կ'երկիցնէ վերարկուն եւ զ խարկը, բայց կարհատես ըլլալով՝ իրերը միշտ հակառակ ուղղութեամբ) Ա՛ռ ասոնք նայիմ. ո՞ւր ես Մարիամ:

ՊԵԱ. — Հոս եմ, հոս, Օրիորդ: Ա՛խ, սիրելի Օրիորդս, այսօր դարձեալ բան մը չէք տեսներ:

ՕՐ. — Այո՛, ակնոցս կորսնցուցեր եմ. պիտի ստիպուիմ նոր մը գնել:

ՊԵԱ. — Ո՞չ, ո՞չ, Օրիորդ, Զեր ակնոցը հոս էք թողեր. օրիորդ Տիրուհին գտած եւ պահած է:

ՏԻՐ. — (Ցած ձայնով) Ապո՛ւշ քեղի. ձայնդ քաշէ:

ՕՐ. — Ո՞խ, ապրի Տիրուհիս. շուտ տո՛ւր նայիմ ակնոցս, Մարիամ:

ՊԵԱ. — (Այնալէս կը ձեւացնէ իբրեւ քէ Օրիորդին ըսածը չէ հասկած) Այո՛, այո՛, տակաւին բաւական լուսաւոր է:

ՕՐ. — (Զօրաւոր ձայնով) Ակնոցս կ'ուղեմ. ըսէ՛ Տիւրիւկին, թող բերէ:

ՊԵԱ. — Ի՞նչ. ո՞ր տիւտիւկը:

ՕՐ. — (Բարկացած, շատ բարձր ձայնով) Օ՛Փ, ակնոցս Տիւրիւկը կամ Տիւրւէ՛ն բերէ ըսի. ուստի՞ հանեցիր տիւտիւկը: Գնա՞ աշակերտուհիներս հո՛ս կանչէ:

ՊԵԱ. — Աշակերտուհինե՞րը . . . Հա՛, հասկցայ: Բայց անոնք տունը չեն, պարտէղն են, իրենց սովորական պտոյալը կ'ընեն:

ՕՐ. — Շատ ցաւալի բան է այս: Մինչեւ որ անոնք դան, ես առանց ակնոցի՞ պիտի մնամ:

ԱՆ. — (Ցած ձայնով) Մեր գործին աղէկ կու գայ:

ՕՐ. — (Պէաքրիսին) Ո՞վ է հիմայ խօսողը:

ԱՆ. — (Շուտով առջեւը ելելով, շինծու ձայնով խօսելով) Ես եմ խօսողը: Ցրտառութեան հետեւանօք հարբուխ եմ եղած: Անշուշտ պատիւ ու հաճոյքն ունիմ վարժարանին տեսչուհի Օրիորդին հետ խօսելու:

ՕՐ. — Այո՛, ե՛ս եմ այս հաստատութեանս տեսչուհին: Ի՞նչո՞վ կը նամաք Զեղի ծածայել:

ԱՆ. — Ոչ, ծառայելու վրայ չէ խօսքս: Ես սա վարը (մատով կը ցուցնէ) բնակող Արլահամ Աղային կողակիցն եմ: Շատ հաւանական է, որ զիս եւ բնակած տունս տեսած ըլլաք, չէ՞:

ՕՐ. — Դժբախտաբար ո՛չ, տիկին:

ԱՆ. — Բայց ես իրավէս շատ կը զարմանամ, Օրիորդ, որ դուք չէք ճանչնար Արլահամ Աղան եւ մեր երկու գողտրիկ աղջիկները. աշխարհ ամենայն կը ճանչնայ զմեղ: Ինչ որ է. հիմայ ես երկու աղջիկներս բերած եմ ձեր վարժարանը դնելու, երկուքն ալ բաւական ուշիմ են եւ կը յուսամ թէ Զեր լիուլի գոհունակութեան պիտի արժանանան: (Ետեւը կը դառնայ) Ինծի նայեցէ՞ք, վարդուհի՛, Զարուհի՛, եկէ՛ք, մի՛ քաշուիք:

ՕՐ. — (Պէաքրիսին) Մարդիամ, տիկինին եւ օրիորդներուն աթոռ հրամցուք:

ՊԵԱ. — Շատ լաւ:

ԱՆ. — Տեսէ՛ք, Օրիորդ տեսչուհի, ասիկա Վարդուհի կը կոչուի, իսկ մէկալը Զարուհի: (Կատարինէն ցուցնելով) Ասիկա ալ Յովսէփին է, բայց դպրոց մանելու համար չէ եկած, հապա մեզի ընկերանալու համար: Մանչս իր քոյրերը շատ կը սիրէ: Ատոնք

Երեքորեակ են, անոր համար զիբար չափա-  
ղանց կը սիրեն: Կարծեմ այս աղջիկները  
դպրոց ընդունելու Ձեր կողմանէ դժուարու-  
թիւն մը չկայ: Ինչ որ է պարտքերնիս, մէկ  
անգամով կը վճարենք:

ՕԲ. — Ասոր վրայ ամեննեւին տարակոյս  
չունիմ. սակայն ներեցէք, որ աղջիկները  
փոքրիկ քննութենէ մը անցընեմ :

ԱՆ: — Շատ շնորհակալ կ'ըլլամբ: Հետամ-  
ժեցէք:

ՕԲ. — Ինծի նայեցէ՛ք, սիրելի աշակեր-  
տուհիներս, Վարդուհի եւ Զարուհի. Խըն-  
դրեմ, ըսէ՛ք ինծի, քանի մը խօսքով թէ  
մինչեւ ուր յառաջացած էք Թուարանու-  
թեան, Վայելչագրութեան, Աշխարհագրու-  
թեան եւ Պատմութեան մէջ: (Քիչ մը դա-  
դարէ վերջը) Մի՛ վախնաք, աղջիկներս:  
Ըսէ՛ք նայիմ:

ԱՆ. — Շատ ամէկոտ են. պիտի չկարենան պատասխան տալ, ո՞չ վարդուհին եւ ո՞չ ալ Զարուհին: Եթէ կը հաճիք, թոյլ տուեք որ ե՞ս ընեմ հարցումը. իսկ դուք, Օրիորդ, մտիկ բնէիք:

ՕՊ. — Շատ լաւ, դո՞ւք ըրէք հարցումը,  
եւ ես մտիկ ընկեմ :

Գ. ՆՈՒԱԳ

ԱՆՎԱ

Օ՞ն, շուտ լսէ՛ք ինձ, դո՛ւք, աղջկեներ,  
Մինչեւ հիմայ ի՞նչ էք սորվեր:  
Ըսէ՛ տեսնեմ նախ, դո՛ւն, Վարդուհի,  
Որ առելի ես խելացի:

ՎԱՐԴՈՒՀԻ


Այսպէս սեւ նշաններ գետին անցնին,  
ի՞նչ հոգ լնել զըրի մասին.  
Թէեւ չեմ զիտեր դրել իմ անուն,  
Բայց կը ճըզեմ ճանձէն սիրուն :

ԱՆ. ՏԻՐ. ԿԱՏ. ԵՒԳ. (ՄԻԱՍԻՆ)

Այսպէս հանձար՝  
զըկայ աշխարհ.  
Այս՝ չէ կատակ.  
Շատ են ատակ:

ԱՆՆԻԿ

Փոքրիկ Զարուհի, հիմայ ալ դուն.  
Դուն կը սիրես թուաբանութիւն,  
Գրէ՛ թուղթի վըրայ քանի մը թիւ,  
Եւ նոյնհետան բրէ՛ հաշիւ:



ԶԱՐՈՒՀԻ

Եթէ գիտնայի ընել հաշիւ,  
ինչո՞ւ տայի ես դրամ անթիւ.  
Եւ լրքած թողած խաղ ու կատակ,  
դայի նըստիլ այս յարկին տակ:

ԱՆ. ՏԻՐ. ԿԱԾ. ԵՒԳ. (Միասին)

Այսպէս հանձար  
Զըկայ աշխարհ.  
Այս՝ չէ կատակ.  
Շա՛տ են ատակ:

ԱՆԻԿ

Հիմայ գուն Յովսէ՛փ, ինձ մօտ եկուր.  
Դէմքդ սիրուն է, մաղերդ դամդուր.  
Վէպ ու զըրոյցներ շատ գիտես գուն,  
Պատմէ մէկ հատ, համով նաշիուն:

ՅՈՎՍԵՓ

Երբ սաստիկ յոդնած՝ շատ իրիկուն,  
Կ'երթամ պառկիլ, քաշելու քուն,  
Իմ սիրելի մամս ամէն գիշեր,  
Նըստած՝ պատմէ հի՛ն հէքեաթներ:

ԱՆ. ՏԻՐ. ԿԱԾ. ԵՒԳ. (Միասին)

Այսպէս հանձար,  
Զըկայ աշխարհ.

Այս՝ չէ կատակ.

Շա՛տ են ատակ:

ԱՆԻԿ

Քանի ձեր միտքը ճոխ է այսքան  
Միւս կողմանէ կատակարան,  
Պատմեցէ՛ք գետէն, սարէն ձորէն,  
Ինչ որ զըրքեր կը սորվեցնեն:

ՏԻՐ. ԿԱԾ. ԵՒԳ. (Միասին)

Թէ ձորեր լեռներ, շատ գետեր կան,  
Գիտենք առանց տեղւոյ անուան.  
Աշխարհագրութիւնն է շատ համեղ,  
Բայց դժուար պահել՝ անուն եւ տեղ:

ԱՆ. ՏԻՐ. ԿԱԾ. ԵՒԳ. (Միասին)

Այսպէս հանձար,  
Զըկայ աշխարհ.  
Այս՝ չէ կատակ.  
Շա՛տ են ատակ:

ՕՐ. — Այս պատասխաններէն ես դժուա-  
րաւ գոհ կրնամ մնալ: Այս աղջիկներն ա-  
մենեւին իսկ տաղանդ չունին:

ԱՆ. — Ի՞նչ կ'ըսէք: Տաղանդ չունի՞ն:  
Խնդրեմ քիչ մը մտիկ ըրէք: (Տիրուհիին)

Վարդուհի, Օրիորդ տեսչուհին տո՛ւր իր  
ակնցը:

Տիր. — (Ակնցը տեսչուհին տալով) Հրամմեցէ՛ք: (հոնարհութիւն ընելով)

Օր. — (Զարմացած) Իմ ակնո՞ցս: Զեր  
ձեռքին մէջ... Վերջապէս պիտի կարենամ  
տեսնել: (Ակնցը կը դնէ)

Ան. — (Բնական ճայնով) Օրիորդ, Զեր  
աշակերտուհիները կրնա՞ն եղեր ուրեմն թա-  
տերախաղի համար քիչ մը տաղանդ ունե-  
նալ:

Օր. — (Առջահար) Զեմ հասկնար. ի՞նչ  
կ'ուզես ըսել:

Ան. — Կ'ըսեմ որ դուք հաճեցաք ներկայ  
դտնուիլ փոքր թատերախաղի մը փորձին,  
զոր մէնք ինքնահաւան աղջիկներս, Զեր բա-  
ցակայութեան ատեն յարմարցուցինք: (Վե-  
րարկուն եւ փեղոյրը վար կ'առնէ)

Օր. — Աննա', դո՞ւն ես:

Ան. — Այո', Ես եմ, եւ ահա (մէկալները  
ցոյց տալով) Կատարինէն՝ իրբեւ սիրուն  
Յովսէփ, Տիրուհին՝ իրբեւ խորամանկ Վար-  
դուհի, Եւգինէ՝ իրբեւ խելօք Զարուհի, Եւ  
Պէտրիս՝ իրբեւ մեր բարի, Ճեր, խուլ Մա-  
րիամը:

ԱՄԷՆՔԸ. — Հա՛, Հա՛, Հա՛:

ՕՐ. — Ո՛չ, դուք կերպարանավոխ աղ-  
ջիկնե՛ր: Զիս այսպէս կը խաբէք, Հէ՛:

ԱՄԷՆՔԸ. — Ներեցէ՛ք, թողութիւն  
առուէ՛ք, սիրելի Օրիորդ:

ՕՐ. — (Ծիծաղերես) Լա՛ւ, կը ներեմ  
ձեզի սիրայօժար, արդէն ես ալ ինքնին շատ  
զուարթ եմ եւ ուրախ: Գիտէ՞ք ինչու: Իմ  
յանկարծական ձամբորդութիւնս առահնձինն  
նապատակ մ'ունէր: Աղջիկնե՛րս, նշանուեցայ  
ես:

ԱՄԷՆՔԸ. — Հուրբա՞՛: Մեր Օրիորդը նշա-  
նուեր է. ի՞նչ ուրախութիւն: Սրտանց կը  
չնորհաւորենք, Օրիորդ:

Ան. — Օրիո՞րդ, Զեր ամուսնութեան  
առթիւ այնպիսի հանդիսական ներկայացում  
մը պիտի տանք, որ ամէն մարդ պիտի հիս-  
նայ, պիտի սքանչանայ:

ԱՄԷՆՔԸ. — (Ոգեւորուած) Այո՛, այո՛:  
Կեցցէ՛ մեր Օրիորդ տեսչուհին: (Ամէնքը  
կարգաւ Օրիորդին ձեռքը կը սեղմեն նշան-  
տուքը շնորհաւորելով)

Դ. ՎԵՐԶԱՆՈՒԱԳ

ԱՆՆԻԿ

ի՞նչ ցընծութիւն եւ խինդ, ո՛վ դուք աղջիկ-  
ներ,

Այսօր՝ նըշանուած է աղնիւ Օրիորդ մեր :

ԱՄԷՆՔԸ

*Օ՞ն մաղթենք, դե՛ւ, աղջիկներ,  
Տարիներ երջանկաբեր.*

Հեռու վիշտ

Յանդ եւ միշտ

Այսուհետեւ միանալու համար առաջ է գալիք:

ՏԵՐԱԾԻ

## Φωτικαραն թէ լուսար

## Գործի պատօնեալ

Եւ բրժից, ծովակալ,

Պիտ' դան մեղ ձեռք տայ:

ԱՄԷՆՔԸ

## Фразишиш; Фразишиш:

ԿԱՏԱՐԵԱ

ՄԵՇԻ Ե ԱՅԵ՞Ն ԿՈՎԱԿԱՆԻ .

ԱՐԵՎԱՆԻ ԺԱՄանակակից գործակը

Անմահ Եվանդը պարե

## Ապառ նորհակի:

ԱՄԷՆՔԸ


թրալալա, թրալալա:

ԵՒԳԻՆԸ

Այսպէս մենք աղջկներ,  
Յուսանք անվեհեր,

Ապրիլ դու , Երջանիկ  
դու ու Երջանիկ :

ԱՄԷՆՔԸ



ՀՀ Ազգային գրադարան



NL0372264

13478

## ՇԱՐ ԹԱՏՐԵՐԳԱԿԱՆ

### 1. Թշնամութիւն և զաշտութիւն

Խառն խումբի համար:

### 2. Պանդոկի գողը

Մանչերու համար:

### 3. Սպիտակ տափատը կամ Ակամայ մարգիկը

Խառն խումբի համար:

### 4. Թատերափորժ մը (մամլոյ տակ)

Աղջիկներու համար: